

ՀՐԱՎԵՐՔԻ ԵՐԳՆ ՈՒ ՄԱՔԱՌՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԳԸ

Վ (Սիւմանթոյի «Հայրենի հրավեր» շարքը)

Ս. Գ. ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

20-րդ դարի սկզբին հայ գրականության մեջ մեծ տեղ է գրավում պանդխտության թեման: Պատճառը հետզհետե աճող և սպառնալի շփերի հասնող արտագաղթն էր, որին ամենից առաջ նպաստում էր դեռ նախորդ դարավերջին լինող թուրքական պարզության հասած սուլթանական թուրքիայի ազգային քաղաքականությունը՝ «կոտորել հայերին այնքան շատ, որ մնացածներն էլ թողնեին իրենց հողերը, դատարկեին երկիրը»¹:

Պարբերաբար կրկնվող շարժերից բացի գաղթականության հիմնական պատճառներից էին նաև քաղաքական անտանելի բռնությունները, թուրք կառավարող շրջանների կամայականությունները, հայաժանքները, տնտեսական ծանր լուծը, անօրինական բազմատեսակ հարկերի բռնազանձումները, հողերի կամայական բռնագրավումները, թալանը, կողոպուտը, օրինականացված կաշառակերությունը, կեղծիքը ու կրոնական ու սոցիալական բազմաթիվ այլ հակասությունները:

Դատարկվող երկրի ճակատագիրն ու օտար եզերքներում թափառող հայ պանդուխտի դրաման բնականաբար դառնում է նոր գրականության կենտրոնական թեմաներից մեկը, և համարյա բոլոր նշանավոր դեմքերը՝ Թումանյանը, Իսահակյանը, Տերյանը, Սիւմանթոն, Վարուժանը, Ռ. Սևակը և ուրիշներ իրենց երկերում մեծ տեղ են տալիս աղետավոր երևույթի էության բացահայտմանը: Պանդխտության թեմայի մշակման ճանապարհին ուրույն երևույթ էր Սիւմանթոյի «Հայրենի հրավեր» շարքը՝ հայ պոեզիայի բարձրագույն նվաճումներից մեկը: Եարքը ծնվեց 1909—1910 թթ., երբ բանաստեղծը գտնվում էր ԱՄՆ-ում և հնարավորություն ուներ մոտիկից շփվելու ժամանակի ամենասովոր հայ գաղթաբախներից մեկի կյանքին: Հասկանալով «ավիտայաց երկրում» հաստատվելու կործանարար հետևանքները՝ Սիւմանթոն ծառու է լինում երևույթի դեմ՝ մեկ անգամ ես հաստատելով այն մեծ ճշմարտությունը, թե «Պոեզիան կյանքի արտահայտությունն է կամ, ավելի ճիշտ է ասել, հենց ինքը՝ կյանքը: Ավելին. պոեզիայի մեջ կյանքն ավելի է կյանք, քան բուն իրականության մեջ»²: Ծիշտ է, շարքի ծննդյան կարևորագույն գործոններից մեկը բանաստեղծի՝ Ամբրիկայում գտնվելն էր, բայց բուն պատճառներն ավելի խորն էին: Նախ պանդուխտի հոգեբանությունն ու վիճակի ամբողջ ողորդականությունը երբեք անձանթ չեն եղել Սիւմանթոյին: Ակնեցի բանաստեղծը դեռ երեխայության ու պատանության տարիներին հայ մամիկներից ու հարսներից շարունակ լսել ու ապրել էր հայրենի երկրի հրաշակավոր անտունիներով, իր հոգում կրել այդ նուրբ, տրամաբխիժ նվազները, որոնք սրբույն ձևով պիտի բեկվեին «Հայրենի հրավերում»: Մյուս կողմից՝ երկար տարիներ ինքն էր ստիպված ձեռքն առնել տանդիստության ցուպը ու երիտասարդության լավագույն տարիները մաշել օտար երկնքի տակ, թափառական ու անապահով, արդեն ֆիզիկապես ապրելով մանկություն երգերի դուր ճշմարտությունը:

Երկրի քաղաքական բախտով ապրող վրեժի ու մաքառման երգիչն այստեղ՝ «Հայրենի հրավերում» բացահայտ կողմի ու պայքարի տրամադրությունների փոխարեն «...խորհում է ինչ-որ նոր բան, ապրում մեզ համար անհայտ նոր տրամադրությամբ, բերում, եթե կարելի է այդպես ասել՝ «խաղաղ» ու «տևական» մաքառման թեման»³: Դա արդյունք էր Սիւմանթոյի քաղաքական դավանանքի: Բեռլինի Վեհաժողովից հետո ծավալված դեպքերը ցույց տվեցին, որ փոքր ազգերի ճակատագիրը որևէ չափով չի կարող հետաքրքրել կապիտալիստական խառը տնտեսություններին, և թե նրանց շահերը չեն համընկնում: Առաջադեմ մտածողներից շատերի գիտակցությանը հասավ Գ. Սրվանձտյանցի՝ «Հայաստանին մեչ է բուն հայկական խնդիրը, և մեք Գերլինի մեջ կորոնեք զայն» նորօրյա մտածողությունը: Հարցի էությունը խորապես ըմբռ-

¹ Վ. Փափազյան, Պատմություն հայաց գրականության, Թիֆլիս, 1910, էջ 588:

² Վ. Բեիլնակի, Փիլիսոփայական ընտիր երկեր, հ. 1, Եր 1954, էջ 279:

³ Հր. Թամրազյան, Սիւմանթոն, Եր., 1964, էջ 105—106:

նում է նաև Սիամանթոն՝ բացահայտելով իր «ազատածույի թնարի» տարածախորքային սահմանները:

Մոռացումներու մոխիրին մեզն է որ զԲեզ պատանեցի,

Ո՛վ երկրայելի, եսանվեր ու սնոտի Սեր,

Եվ չի ճանեցա հյուսել խարտյաշ եղեգներեն ոչ դափնի և ոչ պսակ,

Ու ո՛չ ալ դողոյց երգ մը. Բեզի ճամար, իմ ազատածույի քնարես...⁴

«Տառապանքից խնեթացած ժողովրդի» բանաստեղծը չէր կարող շրջել «ցավակոծ ցեղի բարկության թույնը և իր ավերված աշխատանքին մոռկե բողոքը» (ընդգծումը մերն է—Ս. Ս.), և բնական է, որ բանաստեղծական դավանանքը չի փոխվում նաև նոր շարքում:

«Օսմանյան հնդպիտությունը» հաջորդած «խաղաղ շրանը» ժողովրդին ներկայացավ արյան ու նախճրի նոր դրսևորումներով, և, ինչքան էլ թուրք կառավարող շրջանները թյուրիմացություն անվանեին, այն ազատության, Լեզալություն և հավասարության երազներով օրորվող ցեղի համար ունեցավ ցնցող նշանակություն, առավել ևս անցյալի աղետներից բաժանվել շխարհացող, բայց և ամբողջովին ներկայի հոգսերով տառապող Սիամանթոյի համար: Այդ պատճառով էլ նա շարունակում է նախորդ տրամադրությունները՝ այս անգամ ընտրելով պայքարի «անարյուն» ճանապարհը:

Եվ վերջապես, որպես իսկական բանաստեղծ, Սիամանթոն պարզապես չէր կարող նոր ժամանակներում չփնտրել նախորդ տրամադրությունների նոր շարունակություն, գոյատևման նոր ուղիներ, շարտահայտել ժողովրդի խոհերը, որովհետև, ինչպես նշում է ռուս մեծ քննադատը, «որքան ավելի բարձր է պոետը, այնքան ավելի է նա պատկանում այն հասարակությանը, որի մեջ նա ծնվել է, այնքան նրա զարգացումը, ուղղությունը և նույնիսկ տաղանդի բնույթն ավելի սերտորեն են կապված հասարակության պատմական զարգացման հետ»⁵:

Սիամանթոն համաքայլ է ընթանում իր ժողովրդի պատմական երթին: Կապված ժողովրդի ճակատագրի հետ՝ նոր օրերում փոխվում է բանաստեղծի երգի ընթացքը:

Եղբայրեն՛ր, ես ճակատագրիս ճավատարիմ,
Մաքառումին ուղիներ՝ Մտածումին մոռեցա... (209)

Սիամանթոն գիտակցում է, որ ժողովրդի և երկրի, մարդու և հողի մերձեցման գեպտում է միայն հնարավոր ժողովրդի կեցության կովանների ծնունդը, իսկ այդ կովաններից կարևորը, Մաքառումից բացի, Մտածումն է: Ավելի ճիշտ՝ Մաքառումը մեծապես կախված է Մտածումից, Մտածումն է ծնում Մաքառումը: Նորագյուտ այս փոխոստեղծությունից ելնելով՝ վերագործի իր կոչերից մեկն էլ հղում է «Մտածումի և մենության ջահերը վառելու» կարող ուժերին:

Դո՛ւ՛, Արվեստներու և Գիտությանց վարդապետներ՛ր,
Արգասարեք Երազներու կամ Արժեքի ստեղծիչ,
Դո՛ւ՛, Արհեստավոր, ճարտարագետ, Ոստանակերտ կամ Հմուտ,
Դո՛ւ՛, Իմաստության տիրապետ կամ Գյուտերու խուզարկու,
Դո՛ւ՛ օր կյանքը կը կորզեք և հոծ էլյութեն և զաղտնիքին,
Կոնվեն վերջ՝ որոնումի և մտածման դաշտերը ձեզ կ'ըսպասեն...: (209)

Մտածումի վարդապետներին ուղղված նրա կոչը ծնվում էր վաղվա մտահոգությունից, ապագայի պայքարին «իմաստության ծարավի» սերունդներ նախապատրաստելու ազնիվ տագնապներից: Նա մեծ հույսեր էր կապում հոգևոր մաքառման հետ, որովհետև համոզված էր, որ ազգային օրահասի ժամանակ ողու թուլացումը ինքնին արդեն հրաժարում էր պայքարից, ուրիմն և՛ ստույգ կործանում:

«Հայրենի հրավեր» շարքի համար հետաքրքիր ձև է ընտրել Սիամանթոն: Այն կարծես յուրատեսակ նամակների է, «սկզբից մինչև վերջ տարագիր հայերին ուղղված կարոտակեց նամակների հավաքածու»⁶, որտեղ իշխողը ոչ միայն անասճաման կարոտի, այլև վերագործի տրամադրություններն են՝ արտահայտված մարդկային ամենատարբեր փոխհարաբերությունների միջոցով: Ընդհանրապես ցանկացած բանաստեղծություն ընթերցողին ուղղված յուրատեսակ նամակ է, որ նույնտակ ունի բացահայտել բանաստեղծի նվիրական խոհերը, ուղղություն տալ ընթերցողի մտածողությանը, բայց այս դեպքում ձևի բնորոշությունը պատահական չէ և ոչ էլ երկրորդական հարց: Դեռ «Հայրենի հրավերին» նախորդած «Կարմիր լուրեր բարեկամիս» գրքում

⁴ Սիամանթո, Երկեր, Եր., 1957, էջ 110 (այսուհետև սույն գրքից կատարվող մեջբերումների համապատասխան էջը կնշվի տեքստում՝ փակագծերի մեջ):

⁵ Վ. Բելինսկի, Փոխոստեղծական ընտիր երկեր, հ. 1, Եր., 1954, էջ 295:

⁶ Է. Զրբալյան, Քուսանյանի պոեմները, Եր., 1986, էջ 459:

Միամանթոն օգտագործել էր այդ ձևը: Մի շարք «լուրերի» միջոցով նա ստեղծում էր անմարդկային շարդի բազմաթիվ դրվագներ, որոնք ազնի քան ճշգրտորեն էին ներկայացնում թուրքական բարրարոսության իսկական դեմքն ու էությունը: Լուրերի ձևը նախորդ, իսկ նամականու ձևը նոր շարքում հնարավորություն էր տալիս առավել անկեղծ, ճշմարտացի ու կենդանի արտահայտել քնարական հերոսի խոհերն ու պարումները: Կարևոր է նշել, որ այդ նպատակն ընդհանրապես ժամանակի շատ առաջադեմ հայ գրողների մոտ է առկա: Միամանթոյից թիչ առաջ Վարուժանի քնարական հերոսուհին էր վերադարձի սրտամորմոք կանչ հղում հեռունեբում բախտ որոնող տան միակ հույսին («Կարտի նամակ»): Նույն տարիներին Ռ. Սևակն էր ստեղծում հայրենասիրական քերթվածների իր գիրքը՝ «Վերջին հայերը» որի համանուն բանաստեղծությունը, իր իսկ վկայությամբ, գրված էր «ժողովուրդը արտագաղթել զգուշացնելու» նպատակով: Իսկ Միամանթոն մտքով պարզությամբ հասկացել էր արտագաղթի բերած ոչ միայն սոցիալ-քաղաքական, այլև բարոյական աղետները: Սով, աղքատություն, քայքայում ու ազիբ, տոհմիկ բարձրի ու ազգային նկարագրի աղավաղում, սիրո ու նվիրվածության տեղ՝ հուսահատ անտարբերություն. ահա ինչի դեմ էր ծառայում բանաստեղծական միտքը, ինչի դեմ էր ընդդրում Միամանթոն «Հայրենի հրավերում»:

Պանդուխտ հայը հայրենիքից հեռանալուց շատ տարիներ հետո էլ բազմաթիվ թելերով կապված էր մնում ծննդավայրին, դեռ շատ հիշողություններ էին ստիպում նրան իր հոգում շարունակ կրել բաժանման ցավն ու կորստի անմխիթար մորմոքը: Մահամերձ հայրը, մեռած մայրը, սպասող կինը, ամուսինը, զավակը, եղբայրը, քույրը, սիրակարտ հայուհին, հարազատների շիրիմները և վերջապես հողը, ծառը, լեռն ու քարը, որոնց հետ կապված էին պանդուխտի լավագույն տարիները, նրա մեջ արթնացնում էին հայրենի երկրի կենդանի, ամբողջական պատկերը: Բայց «տարիներու տարափի» տակ առօրյա հոգսերը աստիճանաբար մեղմում էին հայրենացավը, կարոտն ու հիշողությունները:

Ահա վերջին հոգեվարքն պարող հայրը: Մոտեցող մահվան սարսափից ազնի ծերունին պարում է պանդուխտ որդու կարոտը, որը կարոտ էլ չի, այլ շունչը կարճող մորիկ, ծարավ: Մահաչերմի մեջ հայրն արվում է այդ կարոտից ու միակ սփոփանքն ստանում է որդու տնկած վարդի թերթերից: Բայց անսահման հավատ կա հոգում, հավատ որդու վերադարձի, այսինքն՝ հայրենական օջախի շենացման վերաբերյալ.

Եթե դիակա ալ ըլլա, շուրերնիդ մեկ, ձեր ստերուն վրան առած,
Եթե դիակա ալ ըլլա, պետք է որդիս, այս իրիկուն, աչքերս բա՛ց
դիմավորեմ... (191)

Նույն ողբերգական զգացումն ու ցավը, նույն ծարավն ու զարմանալի հավատն է նաև «Մայրը իր զավակին» ողբերգական պատկերում: Գորովագութ մայրը մեն մենակ, վշտի հետ երես առ երես է մնացել, որովհետև.

Չորս սևադեմ մեռելիք ճաղ մը իրենց ուսերուն,
Չորդ մարմինը մինչև այսօր, դեռ, կարծես,
Շտապաբայլ իր տեակեն դուրս կը հանեն... (208)

Միայնական մնացած մայրը «խոսքի է բռնվել» պանդուխտ որդու հետ: Նա որդու հիշողության մեջ թարմացնում է անցյալի հեռավոր ու պայծառ հուշերը. ծնունդը, մայրական տաղանայներն ու արջունքները, ծպիտները, համբույրները, օրորը: Մոր խոսքը հիշեցնում է նաև որդիական ամենասուրբ պարտականության մասին՝ մայրական կաթի հանդեպ.

Եվ ստիճենես՝ երկու գարուն իրենց կարավը մարգարտե,
Երիտասարդ այդ ճասակիդ կարին տեսիլք տվին: (207)

Անցյալի պայծառ հուշերի ու ներկայի դառն իրողության հակադրությունը հուսահատության փոխարեն ծնում է խորունկ մի հավատ՝ հանուն կյանքի, ընդդեմ մահվան.

Բայց ես կամփիս կրակներովը Աստուծու դեմ պիտի կռվիմ...
Կյանքի՛ն փառած, հույսի՛ն փառած, և արևի՛ս և արևի՛դ՝
Մահվաճես դեմ, մոր մը ուժովը պիտի կռվիմ...
Ես կյանքի՛ն կ'ուզեմ, զավակս, ապրի՛լ կ'ուզեմ, ապրի՛լ կ'ուզեմ...
Իմ մարմինս այս տեակեն գերեզմանեճց պիտի չերթա,
Մինչև որ դուն առավոտ մը ընդես սեմերեն նեսս չի մտեսս... (208)

Ժողովրդական հավատը պարտավորեցնող ուժ ունի: Երկրին ու ժողովրդին ամենաթույլ շափով իսկ կապված մարդն անգամ չի կարող անտարբեր լինել այս մաքուր ու անշեշ հավատի հանդեպ: «Մոր մը երազը» գրա լավագույն դրսևորումներից է շարքում: Մեռելուցի կենդանիներին

շորս նահատակ որդիները այցի են եկել իրենց միայնակ մորը: Մեռած որդիների պատկերը տուրք չէ միտասցիզմին և ոչ էլ պատահականություն: Բանաստեղծը գեղարվեստական այդ հնարանքով հակադրում է ոչ վաղ անցյալն ու ներկան և առավելությունը տալիս անցյալին: Այն ժամանակ մարդը իր օջախի ու հողի հետ էր, նահատակվում էր պայքարում կամ գոնե իր ծննդավայրում էր մեռնում ու թաղվում մայր հողի գրկում՝ գոյատևելով ապրողների հուշերում:

Մայրի՛կ, մայրի՛կ... Եւր օրերս՛, Եւր օրերս՛... թշվառություն.
Ի՛նչպես այլևս մե՛ք մեր հողին վերադառնանք, ի՛նչպես դառնանք...

Հին «օրերու արշալույսի» փոխարեն նոր օրերին բնորոշ է «նոր հույսերու թշվառությունը» բայց: Նույն ժամանակ, բանաստեղծության մեջ չի խամրում հույսն ու հավատը: Մայրը շարունակում է պահել մատաղացու գառը՝ որդու դարձին նրա ոտքերի տակ մորթելու:

Նախորդ քերթվածի յուրովի շարունակությունն է «Սղոթային իր եղբորը» ողբերգական պատկերը: Հեռուներում դեզերող պանդոխտի հոգին հերթական անգամ է «մահվան գուժով մը փլատակի մը» վերածվում՝ գալիս է մոր մահվան բոթը: Ժողովրդական հավատալիքի համաձայն, երբ մարդը մեռնում է իր ձեռքի կատարման ճանապարհին, երբ չի տեսնում նվիրական ցանկությունների կատարումը՝ մեռնում է բաց աչքերով: Հայության գլխավոր երազը՝ տեսնել պանդոխտ հարազատին հայրենի տանը, միշտ մեռնում էր անկատար: Պատահական չէ, որ Սիամանթոյի քնարական հերոսներից շատերն են բաց աչքերով մեռնում:

Ես էի որ, ո՛վ օարսա՛փ, քիչ մը առաջ, ձեռքերովս որդիական,
Մեր մորկանը երկու աչքերը հուսալատ,
Քու ճանապարհեղ հեռավոր, դեպի մահը փակեցի... (194)

Դառնությունը գրում է եղբայրը: Մինչև մահվան օրը մայրն ապրել է հավատով, « հույսով զեղուն», ապրել որդու վերադարձի ու օջախի շերմացման վառ տենչերով: Եթե նախորդ բանաստեղծություններում դրամատիզմն ու հուզականությունը ներկայացվում էր քնարական հերոսի ապրումների միջոցով, ապա այստեղ Սիամանթոն ընտրել է մի տեսակ «նկարագրական ոճ»: Բայց դա չի խանգարել նրան ներկայացնելու «մահվան զարհուրելի բույրովն ամպոտած» տան դրաման: «Տունն ամբողջ տիեզերք մ'է մեռելական» զարմանալի տարողունակ պատկերը ամբողջ խորքով բացահայտում է արտագաղթի ողբալի էությունը: Դատարկվող, թափուր տան լրանան ա՛լարտվում է փակվող դագաղի տխուր ու ազդեցիկ պատկերով:

Եվ ես թշվառս՛՝ գերեզմանոցե՛ն վաղև առավոտ պիտի դառնամ
Հին օրերու մեր այս քափու՛ր տնակին...
Երկու դռներն իբրև դագաղ,
Ես իմ վրա՛ս, ես իմ վրա՛ս, խենթի մը պես փակելու...» (195)

Մեռելական տիեզերքի պատկերը ըստ ամենայնի վերաբերում է ողջ Հայաստան երկրին: Գեղարվեստական ընդհանրացումն ամբողջանում է «Կաղանդի իրիկուն» բանաստեղծության մեջ, որը կառուցված է բանաստեղծի խոհերի ընթացքով: Փանի դեռ սպիտակաթույր ձյունը «արյուններեն չի կարմրած հողին վրան» կաթնամարմին Հավերժահարսը՝ Հույսը ձեռքին ազատորեն անցնում էր «երազներու ծաղկեպսակ ճամփաներեն», մարդիկ դեռ երջանիկ էին, նրանք դեռ բնության բարիքի, մեկը մյուսի նայվածքի մեջ «յուրաքանչյուրն իր դրախտը կը տեսներ»: Բայց փոխվում են ժամանակները, հայոց պարզ երկնքով անցնում է նրազները մոխրացնող շարիքը, և կյանքը դուրս է ընկնում իր սովորական ընթացքից, ժողովրդական տոներ փոխվում է սգահանդեսի, որովհետև երբեմնի մարգարտի պես տեղացող ձյունը «Գերեզմանին բարերուն պես եղբրական, վար կը թափի»: Այժմ արդեն «ավանդության ոսկիին տեղ՝ մարդերուն դեմ՝ միայն անե՛ծք կը հոսի»:

Աստանդական կյանքը կործանարար ազդեցություն է ունենում հատկապես երիտասարդ հոգիների վրա: Գեռ կյանքի արշալույսին նրանք ստիպված են կրել բախտի դաժան հարվածը, ապրել բաժանման ու կորստի անլուր կսկիծը: Տառապանքի նման պատմություն է «Սերը»: Սիրո ու մայրության համար ծնված հայ աղջիկը ստիպված է «անթիվներու թվին մեջ» փնտրել իրեն սնծանոթ, բայց հարազատ երիտասարդի աստղը: Թեև համոզված է, որ ճակատագիրն իր համար էլ մեկն ունի պահած,

Բայց բնությունը գառուններուս դեմ բռնավոր՝
Առափինի իրանիս շուշաներն այս կուսական,
Իւ անօրեն օրե՛նքին կրակներովը կ'այրեն... (202)

Ո՛չ նայվածք, ո՛չ սիրո խոսք, ո՛չ սփոփանք: Սերը մնում է անհաղթ, ժամանակից շուտ

Քառամում են ժպիտները, մնում է միայն հեծեծանքն անհայտության մեջ: Երիտասարդ կշան-
ոի ա տասպալից ողբերգությունը արտասովոր ուժի շնչով ավածության է նամում «շարուն: րու-
ղում»: Արտակարգ նուրբ, կատարյալ ձևի մեջ բանաստեղծը ներկայացնում է խորտակված
կյանքի ու շիրականացած տենչերի տառապալից պատմությունը: Հենց սկզբից բանաստեղծու-
թյունը համակում է մեղմ հուզումով ու սարսուռով, որ աստիճանաբար շրկանալով՝ անսովոր
կիրք ու կրակ է դառնում: Ամենից ավելի այս բանաստեղծության մեջ է գրանդում Սիաման-
թոյի՝ ժողովրդական կյանքի ու մտածողության խորիմացությունը: Նա հրաշալի գիտեր Ակնա
բանաստեղծությունը, որի «մեկ սովար մասը կարտող կ'երգե, և նուրբ, ուժեղ, հանճարեղ բա-
ցատրություններով կը հորդի: Ընդհանրապես կարտոի ճիշդ Ակնեն կ'արձակվի առ պանդխտայլը:
Երբեմն նամակներուն մեջ կը մտցնեն քանի մը տող այդ սրտահույզ երգերեն (անտունիներից—
Ս. Ս.), որ անդիմադրելի ուժով մը զպանդուխտը անհապաղ տուն վերադառնալու որոշումին կը
բերեն»⁷:

«Զպանդուխտը անհապաղ տուն վերադառնալու որոշումին» բերող նպատակ է հետապն-
դում նաև «Հարսին երազը»: Իր «սրտահատոր հեռավորին» ուղղված «գրով» քնարական հերո-
սուհին ուզում է մեկ անգամ էլ Երգել իր «մարմինի ու մտքերու անտեր սարսուռը»: Նահա-
պետական սովորության համաձայն ակնեցի հարսը իր ապրումները ոչ ոքի հետ չէր կիսում: Դրա
փոխարեն ամուսնուն ուղղված նամակներում նա անզուսպորեն խորն էր ու քնքույշ: Արտասու-
վոր կրթու ու պահանջկոտ է նաև Սիամանթոյի հերոսուհին:

Երջանկության վախճան ու տառապանքի սկիզբ. այսպիսին էր մեկնումի օրը: Գեղար-
վեստական բազմաթիվ պատկերներում Սիամանթոն ներկայացնում է պահի ողբերգությունը:
Սպասումի ծանր տարիների սկիզբն է հիշում կինը, մայրը.

Ա՛հ, մեկնած օրվանց արեգակը շե՛ս հիշեր,
Արցունքիս շափ առատ էր և համբույրիս շափ ճռաշունչ,
Խոստումներուդ շափ բարի՛ էր և քու դարձիդ շափ արագ...
...Ա՛հ, մեկնած օրվանց արեգակը սև՛ գիշերի փռվածքով...
Ու սպասումիս արցունքները տարիներու տարափին տակ,
Աշվներես, այտիս վրան, աստղերու պես հասելով՝
Անոց վարդեն անավասիկ որ այրեցի՛ն... (192)

Հիշողություններից հետզհետե սաստկանում է կարոտը: Պատկերները հաջորդում են իրար, ու-
րոնց միջոցով ամբողջանում է հայրենի երկրի նկարագիրը, ժողովուրդը՝ իր հավատալիքներով,
սովորություններով: Սաստկացող կարոտը դառնում է անդիմադրելի ուժ, տոչորող ծարավ:

Պանդխտության գլխավոր ուղին ծովն էր: Մովով էին մեկնում հեռավոր աշխարհներ, և
ծովն էլ դիտվում էր որպես վերադարձի գլխավոր արգելքներից մեկը: Ինչպես ժողովրդական
շատ երգերում, այնպես էլ Սիամանթոյի մոտ քնարական հերոսուհին ծառս է լինում այդ ար-
գելքի դեմ.

— Մովերն օր մը ծայրն ի ծայր քո՛ղ ցամափն,
Ու ակնքարք մը երկու աշխարհը քո՛ղ իրարու մտեճան...
Այնուհետև արժայության ու արևի ա՛լ պետք չունիմ.—
Վերադարձի՛ր մեր տնակին սեմին վրա, ես քու համփուղ կ'սպասեմ,
Ձեռքս պարապ քու ձեռքերեդ, սևերուս քե՛զ կ'երագեմ... (192)

Աստիճանաբար փոխվում է խոսքի մեղմ բնույթը, բանաստեղծությունը ձեռք է բերում
բարձր լարվածության շեշտեր: Քնքույշ ու սրտագին խոսքը վերածվում է պահանջի, դառնում
յուրատեսակ բողբո՝ ուղղված կյանքի աններդաշն ընթացքի դեմ: Կարտոի ու սպասման տրա-
մադրություններին զուգընթաց ավելի ու ավելի որոշակի է լսվում վերադարձի կանչը, որը երգի
րուն խորհուրդն է, հիմնական մտտիվը.

Վերադարձի՛ր, մեր պարտեզի՛ն պտուղներուն պես անուշ,
Մտիս սերը քեզի համար իր համբույրը կը պահե:
Ա՛հ, իմ կաթնաբույր կողբես դեռ մայրություն չի ճանչցան...
Եվ հարսանեկան իմ ոսկեթել քողերով
Դեռ չի կրցա իսնճարուր մը գարդարել...
Ու օրորանի մը առջև նստած դեռ չերգեցի՛. դեռ չերգեցի՛
Հայ մայրերուն մաճուր օրորն երկնային... (193)

Հատ կույան սա ցեղի շարունակության, ազգի հետագա ճակատագրի նկատմամբ Սիաման-

⁷ Մ. Ս. Փարիկյան, Ակնա գավառաբարբառը և արդի հայերեն լեզուն, Վիեննա, 1912, էջ
140:

Բոյի ազնիվ սագնապնեի դրսևորումն էր: Բանաստեղծութունն այնուհետև ընթանում է լարվածութան թուլացման ուղիով. հանդարտվում են կրքերը, բայց մնում են ցավի ու բողբոջի տիրական ձայները.

Սեր հեծեծանքս կր հատնի ու արցունքներս կ'արշուներին...

Լվված հարսի երագներու մեջ մեծավոր.

ես իմ ձեռնովս. դէկ մը պես, ա՛լ կ'նկսիմ,

Գլխուս վրան՝ իմ մտավոր գերեզմանին հո՛ղը մաղել... (193)

Շարունակվում է մարդու և երկրի փոխկապվածութան փրկիստփայլությունը: Պանդխտության թևման ձևեր է բերում ավանդականից միանգամայն տարբեր բովանդակություն: Եթե ժողովրդրդական երգերում պանդխտի համար, շնայած նույն կարտտին ու ցավին, ծխացող օջախն ու սպասող հարազատը, հայրենի տունը պահում էին վերադարձի հույսը, հնարավոր դարձնում այն, ապա նոր ժամանակներում ավերված էր տունը, մարած էր օջախը, հետզհետե մեռնում էր և վերադարձի հույսը: Սկ միանգամայն բնական է, որ Սիամանթոն նոր ժամանակներում դավաճանություն է համարում հայրենիքը լքելը, «վատերու պես» սուրը նետելով՝ սեփական անձը փրկելը: Սիամանթոյի փրկիստփայլամբ ֆիզիկական գոյությունը չզոյություն է, եթե դուրս է հայրենիքից, եթե չի նպաստում երկրի կեցությանը: «Գերեզմաններն ապաշավը» այս մտքի հաստատումն է, որը կառուցված է ուրվականային տեսիլի գեղարվեստական հնարանքով, ինչպես «Մոր մը երազը» և «Այգեկույթը»: Այստեղ ևս մտածողությունն ամբողջանում է նահատակների խոսքի միջոցով: Թեև բացահայտ չէ վերադարձի կողմը, ինչպես նախորդ բանաստեղծություններում, մասնավորապես «Հարսին երազում», բայց գաղափարն այստեղ ևս ակնհայտ է: Յուրօրինակ այս մահվան տեսիլում Սիամանթոն նորովի է քննում հայրենադարձության խնդիրը: Նա կիրառում է գեղարվեստական ուրույն հնարանք. բանաստեղծությունը հայց «եռահարյուր հազարավոր նահատակներու» մեղադրանքի խոսքն է՝ ուղղված նորօրյա դավաճաններին՝ հայրենիքը լքողներին: Նրանց խոսքը ձևեր է բերում ներքին խորը բովանդակություն, դառնում զավակների դարձին սպասող երկրի ձայնը: Հրավերքի արժեք են ստանում նաև նահատակների «հուշերը»՝ շարդի առանձին զրվագներում կամք և արիություն ցուցաբերած, պայքարում ընկած ու ապրողներից հանիրավի մոռացվածների մասին: Սիամանթոն արիության մեռնելը ավելի ճիշտ է համարում թշնամու դժբախտությանից.

— Վատերուն մեջ վատն ես եղա, թշնամիք հանդիման,

Երբ գրություն պաղատելով ես իմ վիզս երկաթեցի... (205).—

դառնությունը խոստովանում է զոհերից մեկը: Մավալվում են սև օրերի սոսկալի հուշերը: Տաս տարեկան երեսան իրեն զոհում է անծանոթ կնոջ փրկությանը, ինչպես կաներ հարազատ մորը փրկելիս, այնուր ծերունին «մոտավորին, հեռավորին, անծանոթին սիրուն համար» մաքառման մեծ գաղափարն է լուսավորում: Նահատակների հուշերում ամբողջանում է նաև խաղաղ հայրենիքի կերպարը՝ ջինջ, կարակաշող աղբյուրի, զարնան հոծ ծաղիկների, առուների խխտջի ու զանների մայունի լուսավոր պատկերներով: Դա ոչ այնքան անցյալի հուշ է, որքան ապագայի երազ-տեսիլ: Հենց լուսավոր հայրենիքի դիրքերից էլ փախուստով փրկված տարագիրը դիտվում է որպես դրավաճան և ստրուկ: Սիամանթոն հասնում է գեղարվեստական մեծ ընդհանրացման: Մերումի նահատակի խոսքերում բացահայտվում է ժողովրդի դարավոր երթից ծնված փրկիստփայլությունը, որը ոչ միայն այս բանաստեղծության, այլև ամբողջ շարքի հիմնական գաղափարն է.

Բայց ո՛ր են անոնք որ հեռացան...

Ըսե՛ք ինձի, մե՞նք ենք մեռյալ, թե անճե՛ք...

— Մերունի իմաստությունս հավառացե՛ք,

Այն որ կոխվը չի սիրեց, արժանի չէ այս օրվան...

Մեռյունեք անոնք են, որոնց համար մենք մեռանք: (205—206)

Ժողովուրդն անմահ է, երկիրը նույնպես: Փախուստի ճանապարհը ոչ միայն փրկություն է, այլև «վատերու ճանապարհն է», մինչդեռ ապագան «երիտասարդ կամքերուն» է, նոր կեղծներին.

Որոնք ո՛չ փախուստ են ճանաչեր և ո՛չ ալ եղիքն օտար.

Ազագան ալ անոնցն է, Արշալույսն ալ Եղանկություն... (206)

Ժողովրդի գոյատևման խորհուրդը նրա հավաքական ամբողջության մեջ է: Այն հնարավոր է միայն հայրենի հողի վրա, Երկրում, առանց որի հայ կլինի, իսկ հայություն՝ երբեք: Այս և «Հայրենի հրավերում» արտահայտված մի շարք այլ գաղափարների գերխիտ դրսևորումն է դառնում «Հայ գաշտերուն պաղատանքը» բանաստեղծությունը, որտեղ բացա-

ռիկ հատակութիան ու խորութիան է հասել հրավերքի քաղաքական մոտիվը, հողի գեղարվեստական փիլիսոփայությունը: Այստեղ նախորդ բոլոր կերպարները միավորվում, ձուլվում են իրար, հանդես են գալիս միասնաբար, հայրենական հողի կերպարով: Բանաստեղծությունը ձեռք է բերում կենսական մեծ ուժ, դառնում երկրի ու ժողովրդի միասնության ու հավերժության խորհրդանիշը: Կենդանացած հողը խոսում է մարդկային ամենաբարդ ու բազմազան փոխհարաբերությունների խտացված բարբառով: Հողի լեզուն ծանոթ էր Միամանթոյին: Դեռ դարասկզբին, արհավիրքից ցնցված, նա հենց հողի ձայնով էր փորձում միավորել ցարույրի՞վ ազգային ուժերը, դարձնել այն դիմադրող, պայքարող կենսամիջոց («Հողին ձայնը»): Դեռ այն ժամանակ արյունախեղը հողը օրհասական կովի տագնապալի կանչերով պայքարի էր կոչում իր զավակներին.

Անապարեցե՛՛ք, ո՛վ վրեժխնդրության օրերու զավիւրներս անվեհեր.

Դեպի՛ ձեր հողը նվիրական, ձեր նիզակները ցցած ու ձեր

կուրծքերը բացած՝

Ձեր վանանք կռիվներու հովին, ու ճակատամուխ երկաթներե՛րդ

ճոճե՛յն,

Անապարեցե՛՛ք, ու վայրագաբար ու փորձուկապես ու քիճակույզօրեն,

Դեպի՛ անառիկ ազառածներն իմ հավիտենական կողերուս... (32)

Սոր օրերի կանչը, սակայն, ձեռք է բերում նորօրինակ բովանդակություն: Հողը հիմա տառապանքից բուժման կարիք ունի, նա հիմա արարման կանչ է հղում՝ արյան ու վրեժի փոխարեն.

Եվ երբ ամառը կը ծներ կամ աշունին մանեն առաջ՝

Քաղաքներեն և գյուղերեն՝ գերանդիով, մանգաղներով բեռնավոր,

Հազարներով կուզայիք, հայ դաշտերեն Մարդկությանը իբր բնձա՝

Անխաբական ցորյանին հասուն ճասկերն հնձելու... (216)

Մարդկայնացած հողը կարիք ունի քնքշանքի ու սիրո: Մոր նման նրան էլ չի կարելի մոռանալ, ու մոր նման էլ հողն ինքն է գթոտ ու սիրառատ.

Ա՛ն, զբացե՛՛ք հայրենական և հավաքարիմ ձեր հողերուն,

Գրացե՛ք այն այրիներուն և վարդի նման որբերուն,

Որ առավուտեն հուսաբեկ և իրիկունեն եղբրական,

Իրենց կուրծքերը կոծելով՝ մեր ֆառացած սև կողերեն,

Երկու բուռ հունձե՛ք, ափ մը ցորյան կը պաղապին... (216)

Նորապես ճշմարտացի ու մարդկային զգացումը թվում է, ինչ-որ հրաշքով լեզուն է առել պատմության դարավոր ընթացքից իմաստնացած հողն ու ծնողական զրույցի բռնվել որդու հետ: Մնվում է ժողովրդի հավերժության միակ ճիշտ ճանապարհը մատնանշող հոգածու խոսքը՝ պարզ ու դյուրըմբռնելի.

Ամեն բարիք և մարդկային շարիճներու ամեն դարման,

Մեր խորհուրդեն, մեր խավերեն, մեր օրենքեն պետք է հուսալ...
Ու այսպես՝ Զիթենիին ուտերուն հետ աստվածաբույս,

Սուրեն ալ մեզմե կը ծնանի, սրբությունն ալ Յորյանին...: (217)

Ամբողջանում է շարժը, կոնկրետանում, ձեռք բերում թեմատիկ, գաղափարական, սյուժետային, կառուցվածքային զարմանալի միասնություն՝ շատ բանով հիշեցնելով քնարա-էպիկական պոեմի ժանրը: «Հայրենի հրավերը դառնում է «հայրենիքն ամբապնդող նվիրումի պատվանդան», այնպիսի հատոր, որ «քերթողին գլուխ գործոցն ըլլալ կը թվի ինձի,— ասում է Դ. Վարուժանը,— հոն մարդկային այնպիսի բան մը կա՝ որ սահմանված է մարդ էակին հետ ապրելու»:

С. Г. СРАПИОНЯН—Песня-зов и идея борьбы.—В начале 20-го века в связи с национальной политикой султанской Турции в Западной Армении угрожающие размеры достигает эмиграция. Судьба опустевшей страны и драма армянина-скитальца становится одной из центральных тем новейшей армянской поэзии, с ярким воплощением явился цикл стихотворений Сиаманто (Атом Ярджаниян) «Отчий зов». Своим подчеркнуто политическим содержанием эта книга стала «пьедесталом укрепляющего отечество посвящения» (Д. Варужан).

⁸ «Քրական ասուլիսներ», Միամանթո, խոսք Դ. Վարուժանի, Կ. Պոլիս, 1913, էջ 27: